

2. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ցանկացած երկրի համար, անկախ նրա հասարակարգի և մասնավորապես տնտեսակարգի առանձնահատկություններից, անհրաժեշտություն է պարբերաբար մարդահամարներ անցկացնելը: Այդ են վկայում նաև ՄԱԿ-ի հազարամյակի հանձնարարականները:

ՀՀ 2001թ. անցկացված առաջին ազգային մարդահամարից հետո Հայաստանում տեղի են ունեցել սոցիալ-տնտեսական ու ենթակառուցվածքային փոփոխություններ, բնակչության թվաքանակի, տեղաբաշխման, նրա սոցիալ-ժողովրդագրական, տնտեսական ակտիվության, տնային տնտեսությունների բնակչության պայմանների, աղքատության մակարդակի ու բնույթի, կենսամակարդակի, տարածաշրջանային և տնտեսական գործունեության առանձին ոլորտների բնեռացվածության և այլ բնութագրիչների էական փոփոխություններ: Գաղտնիք չէ, որ 21-րդ դարասկիզբը Հայաստանում նշանավորվեց զանգվածային սեփականաշնորհման գործընթացի ավարտով, ֆինանսական և քվազիֆիսկալ ոլորտների նկատմամբ վստահության ճգնաժամի հաղթահարմամբ, զանգվածային շինարարական գործընթացներով, կացարանների և այլ շինությունների հասցեային տնտեսություններում զգալի փոփոխություններով, սեփականության իրավունքի նկատմամբ վստահության և այդ ոլորտում գործարքների աճով: Բնակչության տնտեսական ակտիվության դրսևորումների ձևերում ավելի զգայունակ դարձավ ձեռնարկատիրական իրավունքի իրացումը՝ ավելի լայն ճանապարհի հարթելով ազատական տնտեսակարգի կառուցման համար:

Տնտեսական և սոցիալական բարեփոխումների ուղի բռնած Հայաստանի Հանրապետության համար շատ կարևոր է ապահովել Հայաստանի Հանրապետությունում մարդահամարների պարբերաբար անցկացումը, քանզի դրանց արդյունքներն էական նշանակություն կունենան յուրաքանչյուր տասնամյակում երկրի պետական և տնտեսական քաղաքականության մշակման, պլանավորման և կառավարման համար, ինչպես նաև հնարավորություն կտան ուսումնասիրել հասարակական ու տնտեսական զարգացման մակարդակներում տեղ գտած փոփոխությունները և կանխորոշել հետագա առաջընթացի նոր ուղղություններն ու սկզբունքները:

Այդ գործընթացները վերլուծելու, գնահատելու և կառավարելու համար անհրաժեշտ է ճշգրիտ և հավաստի տեղեկատվություն բնակչության թվաքանակի, աշխարհագրական տեղաբաշխման, նրա սոցիալ-ժողովրդագրական բնութագրի, զբաղվածության (տնտեսական ակտիվության), տնային տնտեսությունների բնակչության պայմանների և այլ բնութագրիչների վերաբերյալ, քանզի նշված կտրվածքներով և հատկանիշներով ամբողջական տեղեկությունների ստացման հիմնական աղբյուրը մարդահամարներն են:

Հաշվի առնելով վերոհիշյալը, «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջները, ինչպես նաև առնվազն տասնամյակը մեկ մարդահամար անցկացնելու նախկին փորձն ու միջազգային առաջարկությունները՝ Հայաստանի Հանրապետության



կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հերթական մարդահամարի անցկացման ժամկետը սահմանվեց **2011 թվականի հոկտեմբերի 12-21-ը ներառյալ**:

Մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մեքենայական մշակման պատասխանատուն, «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, հանդիսանում է վիճակագրության պետական լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունն՝ իր մարզային և Երևան քաղաքի գործակալություններով:

Մարդահամարի նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման գործընթացները կազմակերպելու համար Հայաստանի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 26-Ն որոշմամբ ստեղծվեց մարդահամարի գործառնական ստորաբաժանում՝ վարչության կարգավիճակով (այսուհետ՝ մարդահամարի վարչություն):

Մարդահամարի վարչությունը բաղկացած էր 5 բաժիններից՝

1. Պլանավորման և ծրագրամեթոդաբանական.
2. Կազմակերպական.
3. Տվյալների մշակման և դասակարգման.
4. Տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման.
5. Վարչատնտեսական:

Մարդահամարի անցկացումն իրենից ներկայացնում է բազմաբնույթ և իրար հաջորդող փոխկապակցված միջոցառումների շարք, որոնց իրականացումն առնչվում է կառավարության, տարբեր նախարարությունների, գերատեսչությունների ու կազմակերպությունների անմիջական մասնակցության հետ: Այդ պատճառով, ինչպես նաև «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 26-ի թիվ 301-Ն որոշման համաձայն՝ ստեղծվեցին 2011թ. մարդահամարի կազմակերպման ու անցկացման համապետական, մարզային և Երևանի քաղաքային հանձնաժողովները:

«Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի համաձայն մարդահամարի անցկացման մեթոդաբանությունն ու կազմակերպման գործընթացները, հրահանգչական փաստաթղթերը, ինչպես նաև տվյալների ծածկագրման և մեքենայական մշակման տեխնոլոգիական գործընթացները փորձարկելու նպատակով 2010թ. ապրիլ ամսին պետք է անցկացվեր **փորձնական մարդահամար**, սակայն, պետական բյուջեի միջոցների սղությամբ պայմանավորված, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի թիվ 313-Ն որոշմամբ փորձնական մարդահամարի անցկացումը հետաձգվեց և անցկացվեց **2010թ. հոկտեմբերի 21-ից 30-ը ներառյալ**:

